ՍԵՎԱՆԻ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ
ԴՊՐՈՑ

<< ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Դասվար

Ուսուցիչ՝ 8 --- Միրաքյան Արինա Ալբերտի

Թեմա ՝ <<Բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքները կրտսեր դպրոցում >>

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Տարրական դպրոցի չափորոշիչով ուսուցչի առջև դրված խնդիրներն բառապաշարի հարստացման ուղղությամբ----------4

Բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքների ուսուցման նպատակադրումների ներկայացում----------7

Բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին տեսական բացատրություններ----------8

Հոմանիշների և հականիշների ուսուցումը որպես բառապաշարի հարստացման միջոց----------14

Եզրակացություն----------16

Օգտագործված գրականության ցանկ ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցում կարևոր նշանակություն ունի երեխայի կրթության և դաստիարակության գործընթացում: Մայրենի լեզվի հիմնական նպատակներից է երեխայի խոսքի զարգացումը, որի կարևոր բաղադրիչներից մեկը բառապաշարն է: Իսկ առանց դրա չի կարող լինել հարուստ, գեղեցիկ, պատկերավոր ու դիպուկ խոսք:

Մեթոդիկայում բառապաշար են անվանում տվյալ լեզվի բառային կազմից ընտրված բառերի այն քանակը, որ մարդն օգտարգործում է իր բանավոր ու գրավոր խոսքում: Խոսքի զարգացման համար երեխայի կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է: Այս տարիքում երեխան, երբեմն իր համար էլ աննկատելի կերպով հազարավոր նոր բառեր, արտահայտություններ ու դարձվածքներ է սովորում:

Գեղարվեստական տեքստի շուրջ տարվող աշխատանքների միջոցով է հարստանում բառապաշարը, ընդլայնվում աշակերտների մտահորիզոնը, զարգանում կապակցված խոսքը: Այդ աշխատանքները իրականացվում են բառակազմական, բառի մասին բացատրման և նրա ճիշտ գործածման վերաբերյալ վարժությունների, հոմանիշների, հականիշների դուրս գրման միջոցով: Այդ նպատակով կատարում ենք ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժություններ: Կրտսեր դպրոցականին պետք է վարժեցնել տեքստում ճանաչել նոր բառեր, բառարանում գտնել նորածանոթ բառի բացատրությունը, այն կիրառել խոսքում՝ կազմելով բառակապակցություններ, նախադասություններ: Այս գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, որպեսզի աշակերտի մեջ ձևավորվի տեքստի մեջ նոր բառի ճանաչման և ընկալման կարողություն:

Ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկն է:

Տարրական դպրոցի չափորոշիչով ուսուցչի առջև դրված խնդիրներն բառապաշարի հարստացման ուղղությամբ

Դժվար է գերագնահատել տարրական կրթության դերը հանրակրթության համակարգում, քանի որ այն հանրակրթության հիմքն է: Ուստի բնական է, որ ուսուցման այս փուլն ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք առանցքային տարբերակում են մտցնում տարրական կրթության և հանրակրթության հետագա մյուս փուլերի միջև: Այս առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից՝սովորողների տարիքային առանձնահատկություններով, մյուս կողմից՝ կրթական համակարգի նախնական փուլի պայմաններով:

Ըստ չափորոշիչի

Ուսուցչի առջև դրված խնդիրներից են.

. բառապաշարի հարստացում և աշակերտների խոսքի քերականական կառուցվածքի մշակում՝ խոսքային իրավիճակին համապատասխան ճիշտ, արտահայտիչ լեզվական միջոցների ընտրության պահանջով:

. լեզվական կանոնների ուսուցում և դրանց նպատակահարմար ու տեղին գործածության՝կախված խոսքային իրավիճակից, իմաստից և արտահայտման ոճից:

. աշակերտների խոսքային գործունեության կատարելագործում և զարգացում:

Այս խնդիրները միտված են արդյունավետ խոսքային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ուստի նաև ՝արդյունավետ շփվող և հաղորդակցվող անձի ձևավորմանը: Միանգամայն հասկանալի է, որ այս հմտություններն ինքնաբերաբար չեն զարգանում, դրանք անհրաժեշտ է հատուկ ուսուցանել:

Այս փուլում է տեղի ունենում ուսումնական հմտությունների, այսինքն՝որոշակի ուսումնական գործողություններ կատարելու կարողությունների, ինչպես նաև ճանաչողական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորումը: Ուսուցման բարենպաստ պայմանների պարագայում ձևավորում և զարգանում են նաև երեխայի ինքնագիտակցությունը և ինքնագնահատական կարողությունը: Այս տարիքային փուլին բնորոշ է նաև այն, որ ի հայտ է գալիս շրջապատող մարդկանց, իր և բարոյաէթիկական նորմերի մասին պատկերացումների

բավականին գիտակցված համակրգ , որի հիման վրա էլ երեխան կառուցում է հասկակիցների և մեծահասակների, ծանոթ և օտար մարդկանց հետ իր հարաբերությունները:

Այս առանձնահատկությունների հաշվառմամբ էլ <<Հանրակրթության պետական չափորոշիչը>> սահմանում է տարրական կրթության հիմնական նպատակները, տարրական դպրոցի սովորողի

.մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը,

. լեզվամտածողության, գեղագիտության, տրամաբանության, աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը,

. աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը,

. բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորում:

. բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը,

. միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը:

Հանրակրթության պետական չափորոշիչը այս նպատակներին համապատասխան սահմանում է նաև այն հիմնական կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևավորել կրթության տարրական փուլում:

Ըստ չափորոշիչի հազորդակցական կարողությունների և հմտությունների ձևավորման արդյունքում սովորողները պետք է կարողանան.

. լսել դիմային խոսքը, արձագանքել, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկատվության հաղորդել,

. կոնկրետ թեմայի վերաբերյալ հաղորդումներ պատրաստել և համապատասխանել թեմատիկ բառապաշար դրսևորել՝ օգտագործելով բարդ և ածանցավոր բառեր,

. ամբողջական նախադասություններով բանավոր մտքեր արտահայտել,

. զրուցակցին անհրաժեշտ տեղեկատվությունը հաղորդել որոշակիորեն ճշգրիտ, հետազոտական և լիարշեք,

. հասկանալ ուրիշների տեսակետը և դիրքորոշումը, որը տարբերվում է սեփականից,

. համարժեք օգտագործել խոսքային միջոցները՝տարբեր հաղորդակցական խնդիրների լուծման համար,

. մենախոսական խոսք կառուցել, երկխոսության մասնակցել:

Մայրենի լեզվի դասի ընթացքում և դասի միջոցով երեխաները տեղեկություններ են ստանում լեզվական այս կամ այն երևույթի մասին և այդ առանձին տեղեկությունները համադրում, դարձնում որոշակի գիտելիքներ: Դա էլ իրականացվում է մի շարք գրավոր ու բանավոր վարժությունների միջոցով:

Բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքների ուսուցման նպատակադրումների ներկայացում

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից է դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավերումն ու զարգացումը: Այսօր ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումն ու զարգացումն արդեն միասնաբար ընկալվում են որպես ուսուցման հիմնական նպատակ:
Ճանաչողական հետաքրքրությունների համար խթան կարող են դառնալ ուսուցումը հետաքրքիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը, ինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը: Առաջ քաշած խնդիրների իրականացման նպատակով անհրաժեշտ եմ գտնում ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը:
Խոսքի զարգացումը, ներառյալ բարեկիրթ խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը, պետք է կատարվի մեկ այլ խնդրով՝ ձևավորել այնպիսի անձ, որը, տիրապետելով որոշակի բովանդակային նյութի, տեղեկատվության, կարողանա ճիշտ կողմնորոշվել կոնկրետ խոսքային իրադրության համապատասխան, այդ թվում՝ հաշվի առնելով իր մտահղացումը, հաղորդակցական նպատակը և այլն:
Խիստ կարևորում եմ աշակերտի սովորել սովորելու և հաղորդակցական կարողությունները: Առաջադրված խնդիրների լուծման համար ես նախ և առաջ իրականացնում եմ տարրական դպրոցի կարևորագույն խնդիրը՝ սովորել սովորեցնել:

Բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին տեսական բացատրություններ

Բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի բառապաշարի հարստացումը, որովհետև <<օբյեկտիվ իրականության առարկաներն ու երևույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում բառերի միջոցով: Բառերը, իրենց հնչյունային կազմով և իմաստով, մեր գիտակցության մեջ հանդես են գալիս իբրև օբյեկտիվ իրականության առարկաների ու երևույթների փոխարինողներ: Այն, ինչ որ մեզանից անկախ և մեզանից դուրս գոյություն ունի իբրև իր, առարկա, երևույթ և այլն, մեր գիտակցության մեջ հանդես է գալիս որպես այդ իրին, առարկային կամ երևույթին փոխարինող բառի նյութական իմաստ>>: [1,էջ 202] Ուսուցման ժամանակ բառ – անվանման կամ բառ հասկացության յուրացումը կամ սեփականումը տեղի է ունենում երկու ձևով. կամ երեխային ցույց եմ տալիս, բացատրում առարկան կամ երևույթը և հետո անվանում այն, այսինքն՝հանդես է գալիս նրան փոխարինող բառը, և կամ առաջադրում եմ բառը և ապա այն բացատրում: Լեզվի բնական ուսուցումը կատարում եմ առաջին ճանապարհով, այսինքն՝ երեխան իր կենսագործունեության ընթացքում հանդիպում է բազմաթիվ անծանոթ առարկաների ու երևույթների և ցանկանում է իմանալ դրանց անունները, և կամ բառային արժեքները՝ որպես դրանց խոսքային փոխարինիչներ: Այս ձևը լայնորեն օգտագործում եմ նաև ուսուցման ընթացքում. ցույց եմ տալիս կամ ներկայացնում առարկան կամ երևույթը, հատկանիշը կամ գործողությունը և ապա այն անվանում համապատասխան բառով: Իսկ երբեմն էլ, ընդհակառակն, սկզբում առաջադրում եմ բառը, իսկ հետո այն իմաստավորվում է, նյութականցվում բացատրման տարբեր ձևերի կիրառումով: Այս ձևը, ըստ էության, արհեստական է, որովհետև հիմնականում կիրառվում է ուսուցման ժամանակ կամ գրքերից ու ընդհանրապես գրավոր խոսքից օգտվելու ընթացքում: Նոր կամ անծանոթ բառերի ուսուցումը հիմնականում այս ձևով՝ բացատրման կամ արդեն առաջադրված բառի իմաստավորման ճանապարհով եմ կատարում: Սակայն ուսուցման համար այս ձևն ավելի նպատակահարմար եմ գտնում, որովհետև հնարավորություն է տալիս

որոշակի ծրագրով պլանավորել բառապաշարի հարստացման աշխատանքները, դրանք դարձնել ավելի նպատակային ու արդյունավետ:
Տարրական դասարանների աշակերտների բառապաշարի նվազագույն և առավելագույն սահմանները մեզանում դեռևս չեն որոշված: Այս պայմաններում բառապաշարի հարստացման աշխատանքի գիտական կազմակերպումը բավականին դժվար է, և միայն մոտավոր չափով է, որ բառաքանակի ընդգրկման, ինչպես նաև բառախմբերի կամ իմաստային դաշտերի ընտրության հարցը կարող է ճիշտ լուծվել:
Բառապաշարի ուսուցման ոլորտների կամ իմաստային դաշտերի հարցը լուծվում է ծրագրով, որովհետև ընթերցանության նյութերի թեմատիկան առաջադրվում է ծրագրով, սակայն ուսուցվող բառախմբերի կամ իմաստային դաշտերի ընդգրկման ծավալի որոշման հարցը թողնվում է ուսուցչին և գերազանցապես պայմանավորված է դպրոցի համար աշակերտների նախապատրաստվածության ու նրանց կոնկրետ հետաքրքրությունների դրսևորման աստիճանով: Երեխաների շրջապատից ու հետաքրքրությունների շրջանակից վերցված այդ թեմաները, ըստ էության, հնարավորություն են տալիս բավականաչափ հետաքրքրական բառային աշխատանք տանելու: Այսպես, օրինակ՝ընտանիք, մանկապարտեզ, մանկական խաղեր ու խաղալիքներ, դպրոց, դասարան ու ուսումնական պարապմունքներ, կենդանական ու բուսական աշխարհ, քաղաք և գյուղ, մարդկային զգացմունքներ ու ապրումներ և այլն: Սրանք այնպիսի թեմաներ են, որոնց շուրջ երեխաները հաճույքով նորանոր տեղեկություններ կընդունեն և հեշտությամբ նոր բառեր ու արտահայտություններ կսովորեն:
Դպրոց նոր ոտք դնող երեխայի բառապաշարը, որը նա մինչ այդ ձեռք է բերել միջավայրից, և որով կարողանում է հաղորդակցվել հասակակիցների կամ մեծերի հետ, երբեմն միայն անհրաժեշտ բառերից կազմված աղքատիկ խոսք է:
Աշակերտի բառապաշարը յուրացրած բառերի սոսկ քանակական գումար չէ: Բառերը աշակերտի ուղեղում գոյություն ունեն որոշակիորեն համակարգված վիճակում՝ իրենց իմաստային կողմով, կիրառական կազմության և այլ հատկանիշներով: Բառերի այսպիսի գնահատումն ու ճանաչումը մեծապես նպաստում են նրանց

առավել նպատակային գործածությանը, համանման կառուցվածք ունեցող նոր բառերի հեշտ ընկալմանն ու յուրացմանը: [1]

Անառակելի է, որ առաջին հերթին հարուստ բառապաշարի միջոցով է երեխան ձևակերպում իր մտքերը, հաղորդակցվում արտաքին աշխարհի հետ: Այս գործընթացում չափազանց կարևոր դեր ունի երեխայի բառապաշարը: Աշակերտների խոսքի զարգացման բոլոր խնդիրները փոխկապակցված են և լուծվում են համալիր ձևով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ խոսքի յուրաքանչյուր միավորի ուսուցումն իրականացվում է խոսքի և մտածողության փոխկապվածության շնորհիվ: Հայտնի է, որ խոսքի զարգացման աշխատանքները մեծապես պայմանավորված են սովորողների բառապաշարի հարստությամբ: Հենց բառապաշարն է իր բավարար ծավալով ու ճկունությամբ օգնում երեխային՝ հստակ և ստույգ ձևակերպելու իր մտքերը:

Սովորողների բառապաշարի զարգացման վրա ներգործում են տարբեր ազդակներ, որոնք կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Այդ պատճառով ուսուցման գործընթացն այնպես եմ կազմակերպում, որ այդ ազդեցությունը լինի առավելագույնս դրական, և սովորողները դաստիարակվեն հայեցի, նրանց խոսքը զերծ լինի օտարաբանություններից ու բարբառային ձևերից:

Երեխաների բառապաշարի վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ հեռուստահաղորդումները: Սա նշանակում է, որ ծնողը հետևողականորեն պետք է ընտրի երեխայի համար նախատեսված ուսուցողական ֆիլմերը, հաղորդումները, մուլտֆիլմերը, հեռուստախաղերը և այլն: Այլապես՝ հեռուստահաղորդումները ոչ միայն չեն նպաստի աշակերտների խոսքի զարգացմանն ու բազմակողմանի զարգացած մարդու ձևավորմանը, այլև կխաթարվի նրանց արժեքային համակարգը, քաղաքացիական դիրքորոշումների համալիրն ու անձնային նկարագիրը:

Շատ հաղորդումներ խեղաթյուրում են երեխայի բառապաշարը: Փոքրիկ բառապաշար ունեցող կրտսեր դպրոցականը նոր-նոր է սկսում զարգացնել իր բանավոր խոսքը և, ցավոք, մեծ հաճույքով է դիտում այն հաղորդումները, որոնք զուրկ են գեղարվեստական արժեքից ու գեղագիտական ճաշակից: Երեխաներն անմիջապես ընկալում, կրկնում և իրենց հիմնական բառապաշար են ներմուծում

այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք երբեք չպետք է տեղ գտնեն երեխայի խոսքում:

Միայն դասագրքերը չէ, որ հարստացնում են աշակերտի բառապաշարը: Այդ գործընթացը կատարվում է անընդհատ՝ ընդգրկելով ոչ միայն մայրենի լեզվի և ուսումնական մյուս առարկաների ուսումնառությունը, այլև ընտանիքը, դպրոցը, հեռուստատեսությունը: Մանկական հաղորդումները, որոնց հանդիսատեսը հիմնականում կրտսեր դպրոցի երեխաներն են, փորձեում են լրացնել երեխայի ճանաչողական և ժամանցային դաշտը՝ դրանով ներգործելով նրանց բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման վրա:

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ հիմնականում աշխատանք է տարվում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության ժամանակ: Այս աշխատանքն իրականանում է ընդամենը տեքստի մակարդակում: Սակայն կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման մեթոդիկան նախատեսում է նաև հատուկ աշխատանք մի շարք ուղղություններով:

Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում իրականացնում եմ գործնական ճանապարհով՝գլխավորապես հենվելով մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա՝առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու: Բառային աշխատանքի քայլերն են.

1. Անծանոթ բառի առանձնացում, իմաստի բացատրում, իմաստավորում: Այս խնդիրներն իրականացնում եմ ինչպես դասագրքի համապատասխան էջի տողատակում անծանոթ բառի բացատրությունը տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դրանց շուրջ տարվող բառակազմական, բառաբարդման, վերլուծական, համադրական աշխատանքներով:

Կարելի է շարադրել պրակտիկայում կիրառելի՝բառիմաստի բացատրության հետևյալ հնարները.

ա) բառի բացատրություն՝ առարկան, առարկայի կամ երևույթի նկարը ցույց տալու ճանապարհով. օրինակ՝ուշ աշուն բառակապակցությունը բացատրվում է՝ ուշ

աշնանային բնությունը պատկերող նկար ցույց տալով,

բ) բառի ստուգաբանում, որի ժամանակ բառիմաստը բացատրվում է բառակազմական վերլուծության ճանապարհով,

գ)բառի բացատրություն այլ՝ իմաստով մոտ բառերի օգնությամբ,

դ) բառի բացատրություն իմաստային մեկնաբանությունների միջոցով. օրինակ՝ հերոս մարդ-մարդ, որը բոլորից տարբերվում է իր քաջ, անվախ արարքներով,

ե)բառի բացատրության հականիշների և հոմանիշների միջոցով,

զ) բառի բացատրություն նկարելով:

2. Բառակազմական վերլուծություն, որի հիման վրա բացահայտվում է անծանոթ բառի նշանակությունը: Տարրական դասարաններում սովորաբար տրվում է այսպիսի հարց - <<Ո՞ր բառերից է կազմվել այս բառը>>կամ <<Ինչու՞են այսպես անվանել. ձնծաղիկ, համազյուղացի, լուսաբաց, արևածագ>>: Բառերի բացատրության այս եղանակը բառային աշխատանքի և ուղղագրության հետ կապեր ստեղծելու հնարավորություն է տալիս, քանի որ այդ դեպքում բացահայտվում են բառերի արմատները՝ նպաստելով դրանց ուղղագրության յուրացմանը:

3. Բառերի համեմատում՝ բառակազմական տարբերությունների բացահայտման նպատակով, որն ստեղծում է նույնարմատ բառերի իմաստների սահմանազատման հնարավորություն:

4. Բացատրություն կռահման ճանապարհով:

Կարդում եմ անծանոթ բառ պարունակող նախադասությունը և հարցնում աշակերտներին. <<Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է նշանակել այս բառը: Կռահեք բառի իմաստը՝ մեկ անգամ կարդալով նախադասությունը>>:

5. Նորածանոթ բառերի բացատրություն տեղեկատվական նյութերի միջոցով, այսինքն՝ բառարաններով, դասագրքի տողատակում կամ հավելվածում տրված բացատրություններով, մանկական հանրագիտարանների հոդվածներով և այլն:

6. Առարկայի, նկարի, մակետի, խրտվիլակի կամ գործողության ցուցադրումը նպաստում է սովորողների ճանաչողական ակտիվության զարգացմանը, եթե այդ գործընթացին նրանք մասնակցում են ինքնուրույնաբար և ստեղծագործաբար, իմաստը բացատրող բառերն ընտրում են իրենք, նկարում են ինքնուրույն՝ առանց

ուսուցչի կամ ծնողի մասնակցության, պատմում են, թե ինչ պետք է նկարեն, ինչ գույներ պետք է օգտագործեն և այլն:

7. Հականիշ գույգերի ընտրություն. լավ-վատ, գեղեցիկ-տգեղ, լույս-խավար և այլն:

8. Մեկնաբանող նկարագրություն. այս հնարն արժեքավոր է նրանով, որ ստեղծում է անկաշկանդ զրույցի հնարավորություն, երեխաները փորձեւմ են ինքնուրույն խոսք կառուցել, բացատրել այս կամ այն բառի իմաստը:

Տարրական դպրոցի աշակերտները, որպես կանոն, խուսափում են նկարագրությունները վերարտադրելուց: Սակայն նկարագրական խոսքը հարուստ է ածականներով, մակդիրներով, համեմատություններով, որոնք էլ հարստացնում, գեղեցկացնում են խոսքը: Ուստի պիտի կարևորել նաև նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը: Որպեսզի հաջողությամբ լուծվի այս խնդիրը, ուղղորդում եմ, որ երեխաները պատմելիս, խոսելիս օգտագործեն ոչ միայն ածականներ, այլև բայեր, գոյականներ, մակբայեր, համեմատություններ, փոխաբերություններ և ամբողջությամբ վերարտադրեն կարդացած ստեղծագործության մեջ զետեղված նկարագրությունները:

Բառային աշխատանքի փուլի հաջորդ խնդիրն է՝ ստուգել, թե արդյո՞ք երեխաները հասկացել են իմաստը և կարող են օգտագործել խոսքում: Այդ նպատակով առաջարկում եմ բառերն օգտագործել բառակապակցությունների, նախադասությունների, կապակցված խոսքի մեջ: Այս հնարը նպաստում է նորածանոթ բառերը խոսքում ըստ իմաստի ճիշտ օգտագործելու, այլ բառերի հետ կապակցություններ ստեղծելու կարողությունների ձևավորմանը: Այս նպատակով տրվող առաջադրանքները պետք է ձևակերպել այնպես, որ աշակերտները բառերը ոչ թե պարզապես օգտագործեն խոսքում, այլ իրականացնեն մտավոր որոշ գործողություններ: Սա բառապաշարի հարստացման մի ուղի է, որի դեպքում նաև պարզ է դառնում, թե աշակերտներն արդոք հասկանու՞մ են բառի իմաստն ըստ ամենայնի և կարո՞ղ են նորածանոթ բառերն օգտագործել խոսքում՝ ըստ դրանց նրբերանգների:

Հոմանիշների և հականիշների ուսուցումը որպես բառապաշարի հարստացման միջոց

Բառապաշարի հարստացման և ճշգրտման ուղղությամբ տարվող աշխատանքի մեջ մտնում են նաև հոմանիշների և հականիշների յուրացման հետ կապված տարաբնույթ վարժությունները:

Տարրական դասարաններում հոմանիշների մասին տեսական գիտելիքներ չեն տրվում: Դրանց ուսուցումն իրականացվում է գործնական ճանապարհով՝ վարժությունների միջոցով: Հոմանիշների ուղղությամբ իրականացվող վարժությունների համակարգը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա) ընթերցվող բնագրում հոմանիշների հայնաբերում, դրանց նրբերանգների՝ տվյալ բնագրում ունեցած նշանակության բացատրում,

բ) տվյալ բառի հոմանիշների ընտրության և նրբերանգների բացատրություն,

գ) հատուկ վարժություններ հոմանիշների շուրջ,

դ) հոմանիշների ակտիվացում՝ օգտագործում կապացված խոսքում,

ե) խոսքային սխալների ուղղում, բառի փոխարինում այլ՝ տվյալ բնագրին մտքով առավել համապատասխան բառով:

Հականիշները հակառակ իմաստ արտահայտող բառերն են և խոսքում օգտագործվում են հակադրություն ստեղծելու համար: Այդ հակադրություններն ակնառու դարձնելու համար իրար կողքի ցուցադրվում են, օրինակ՝ արևոտ և ամպամած օրերը ներկայացնող նկարներ, և առաջարկվում է երեխաներին մեկական բառով նկարագրել նկարներում պատկերված կեսօրը: Իրար կողքի ցուցադրված հակադիր բովանդակությամբ նկարները, երևույթները, զգացմունքները և այլն ընկալվում են ավելի հստակ, ընդգծված:

Երեխաներն իրենց խոսքում հականիշներ օգտագործում են դեռևս նախադպրոցական տարիքից: Դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից մայրենիի դասերին այս կարողությունն աստիճանաբար զարգանում է: Թեև աշակերտները հականիշների հանդիպում են դեռևս գրաճանաչության շրջանում՝ Այբբենարանի նյութերն ընթերցելիս, սակայն հականիշների շուրջ տարվող համակարգված աշխատանքն

սկսվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծությունից, որից հետո կատարվում են նաև հատուկ վարժություններ.

ա) բնագրում հանդիպած հականիշների ընտրություն,

բ) հականիշների, ավելի ճշգրիտ՝ հականիշ – զույգերի նախադասության մեջ օգտագործում,

գ) նախադասության ամբողջացում հականիշներով,

դ) բազմիմաստ բառին համապատասխան հականիշի ընտրություն,

ե) հականիշի և հոմանիշների զույգերի կազմում:

Բառապաշարի ուսուցման հարցում առանձնահատուկ տեղ է գրավում նրա տարբեր շերտերի գոյացումը և մեկի հաշվին մյուսի հարստացումն ու ճոխացումը:

Բառապաշարը լինում է երկու տեսակ՝ գործուն և ոչ գործուն կամ ակտիվ և պասիվ, ընդ որում՝ մարդու, մանավանդ գրագետ մարդու, բառապաշարի ոչ գործուն մասը ծավալով բավականին մեծ է, բայց այն աստիճանաբար վերածվում է գործուն բառապաշարի, որովհետև այս երկրորդը միշտ համալրվում ու հարստանում է առաջինի հաշվին: Սակայն պետք է նկատել, որ դպրոց գալուց առաջ երեխայի բառապաշարը հիմնականում միատարր է, բաղկացած է միայն գործուն բառերից, որոնք երեխան հիշում է, օգտագործում ու հասկանում՝ չնայած երբեմն հանդիպում են նաև բառեր, հատկապես նոր սովորած բառեր, որոնք նա օգտագործում է առանց դրանց իմաստը լրիվ հասկանալու: Հետագայում՝ սովորելուն զուգընթաց, գոյանում է նաև բառապաշարի ոչ գործուն շերտը, բառեր, որոնք երեխան լսում կամ կարդում հասկանում է, սակայն իր խոսքի մեջ դրանք չի օգտագործում:

Բառապաշարի այս շերտը սկզբում ծավալով մեծ չի լինում, սակայն այն աստիճանաբար համալրվում է նոր բառերով և ինքն էլ իր հերթին համալրում գործուն բառապաշարը: Որոշակի ծավալային տարբերություն կա նաև գործուն բառապաշարի երկու ենթաշերտերի միջև, ընդ որում՝ բանավոր խոսքի բառապաշարն անհամեմատ ավելի սահմանափակ է, քան գրավորինը:

Այստեղ էլ գրավոր խոսքի բառապաշարն է աստիճանաբար համալրում բանավորի բառապաշարը, այսինքն՝ գործուն բառապաշարի այս շերտն ավելի գործուն է դառնում, քանի որ գրավորի մեջ այն ավելի սակավ է օգտագործվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բառապաշարի հարստացումը նպաստում է խոսքի զարգացմանը,իսկ խոսքի զարգացումը մայրենիի դասընթացի հիմնական հարցերից մեկն է: Բառապաշարը երեխայի խոսքի, մտածողության ու աշխարհաճանաչողության զարգացման հիմքն է. ամեն ինչ մարդ ընկալում է բառերի մեջ կամ բառերի միջոցով, նույնիսկ շրջապատի ստացած անմիջական տպավորությունները, հույզերն ու ապրումները վերջին հաշվով կայունանում ու մտապահվում են բառային հիմքով: Այս առումով բառապաշարի հարստացումը ոչ միայն խոսքի, այլև ընդհանուր զարգացման համար հսկայական ու անփոխարինելի նշանակություն ունի:

Այստեղից ենթադրվում է, որ ուսումնասիրվող նյութը ճիշտ հասկանալու համար, ըստ էության, պետք է բացատրվեն նրանում հանդիպող բոլոր անծանոթ բառերը՝ լինեն դրանք գրական, բարբառային, թե օտար բառեր: Սակայն ուսուցման համար յուրաքանչյուր դասին պետք է ընտրել 3-4 բառից ոչ ավելի, որպեսզի երեխաներն ի վիճակի լինեն դրանք ճիշտ ընկալելու: Ուսուցման համար ընտրված այս բառերը ոչ միայն պետք է բացատրվեն, այլև օգտագործվեն երեխաների խոսքի մեջ, որոշվեն դրանց հոմանիշներն ու հականիշները, որպեսզի երեխաների բառապաշարը հետզհետե հարստանա, աստիճանաբար ընդարձակվի սովորած բառերի գործադրման ոլորտը: Բառապաշարի հարստացումը մի անվերջ գործողություն է, որ սկսվում է երեխայի կողմից շրջապատի աշխարհը ճանաչելու և գիտակցորեն այն ընկալելու առաջին իսկ օրերից և անդադրում կերպով շարունակվում է մինչև նրա կյանքի վերջը, որովհետև ճանաչումն ու ընկալումը հիմնականում տեղի են ունենում բառերի մեջ և բառերի միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբրահամյան Ս. Գ. – Աշակերտի խոսքի զարգացումը,

Երևան, <<Լույս>>> 1973թ.

Աղայան Է. <<Լեզվաբանության ներածություն>> 1953թ.

Գյուլամիրյան Ջ. – Խոսքի զարգացման մեթոդիկա, 2009թ.

Թորոսյան Կ., Թերեզյան Գ., Խաչատրյան Հ. <<Խոսքի և հաղորդակցություն>> մեթոդական ձեռնարկ, Երևան 2011[էջ3-5,8]

Տարրական դասարանների հայոց լեզվի չափորոշիչ, Երևան 2011 [էջ 43,85,87]

Նախաշավիղ 1. 2012 էջ 17

Տեր-Գրիգորյան – Ա. Ե. Խոսքի զարգացման մեթոդիկա,

Երևան,<<Լույս>> 1973թ.